«ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրենքի 3-րդ հոդվածում.

Ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը արտադրության (բացառությամբ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտադրության) կազմակերպման արդյունքում ստացված արտադրանքի օտարման գործարքների մասով ազատվում են ԱԱՀ-ից, եթե սահմանված կարգով իրենց գրանցման վայրի հարկային մարմին չեն ներկայացրել այդ արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն:

ԱԱՀ վճարող համարվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը կարող են հրաժարվել նախատեսված արտոնությունից իրենց գրանցման վայրի հարկային մարմին՝ վերադաս հարկային մարմնի ղեկավարի հաստատած ձևով արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքում հայտարարությունը ներկայացնելու օրվան հաջորդող օրվանից:

«ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքում ԱԱՀ վճարող համարվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն արտոնությունից հրաժարվելու օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանում կարող են հաշվանցել Ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեության հետ անմիջականորեն կապված՝ մինչև արտոնությունից հրաժարվելու պահն առկա միայն վաճառքի նպատակով ձեռք բերված ապրանքների ապրանքային մնացորդի մասով մատակարարների տրամադրած հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում մաքսային հայտարարագրերում, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ տարածք ներմուծված ապրանքների գծով՝ ներմուծման հարկային հայտարարագրերում) առանձնացված և նախկինում չհաշվանցված ԱԱՀ-ի գումարները:

Նախատեսված արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացրած կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը հետագա հաշվետու ժամանակաշրջաններում չեն կարող օգտվել նշյալ արտոնությունից:

«ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրենքի 4-րդ հոդվածը լրացվել է նոր 3.1-րդ մասով, որի համաձայն.

Նույն հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «ա»-«գ» ենթակետերով նախատեսված դեպքերում կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը օրենքով սահմանված այլ պայմանները բավարարելու դեպքում համարվում են (շարունակում են համարվել) շրջանառության հարկ վճարող, եթե այդ ենթակետերում նշված այլ անձինք հարկային մարմին են ներկայացրել գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն և փաստացի գործունեություն չեն իրականացրել:

Համապատասխան փոփոխություն կատարվել է նաև Օրենքի 5-րդ հոդվածում:

Նշված փոփոխությունները տարածվում է 2016թ. հունվարի 1-ից հետո Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «ա»-«գ» ենթակետերով նախատեսված հիմքերով անձանց փոխկապակցվածությունը բացահայտելու դեպքերի վրա՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է առաջացել այդ փոխկապակցվածությունը:

«ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրենքի 4-րդ հոդվածը լրացվել է նոր 3.1-րդ մասով, որի համաձայն.

Մինչև 2016 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում անձին շրջանառության հարկ վճարող համարվելու առումով բավարար է միայն նշված այլ անձանց կողմից փաստացի գործունեություն իրականացված չլինելու հանգամանքը:

Եթե կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը մինչև 2016 թվականի հունվարի 1-ը, Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի «ա»-«գ» ենթակետերի համաձայն, չեն համարվել շրջանառության հարկ վճարող կամ դադարել են համարվել շրջանառության հարկ վճարող, ապա օրենքի ընդունումից հետո նրանց մասով հարկային պարտավորությունների վերահաշվարկ չի կատարվում:

«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրենքի 15-րդ հոդվածում կատարված փոփոխության համաձայն.

ԱԱՀ-ից ազատվում է ԱՏԳ ԱԱ դասակարգչի 0106 41 000 (մեղուներ), 0106 90 00 90 (կենդանի կենդանիներ՝ այլ), 5305 00 000 0 (մանրաթելեր), 9406 00 310 0 (ջերմոցներ) ծածկագրերին դասվող ապրանքների իրացումը:

Օրենքի 16-րդ հոդվածում կատարված փոփոխության համաձայն.

16-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

ՀՀ-ում (օդանավակայանում) գործող անմաքս առևտրի խանութից ապրանքների մանրածախ վաճառքը միջազգային երթուղիներով մեկնող և ժամանող ուղևորներին, ինչպես նաև այլ հարկ վճարողների կողմից այդ ապրանքների մատակարարումը անմաքս առևտրի խանութի կազմակերպչին հարկվում է ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով: Ընդ որում՝ նշված փոփոխությունը տարածվում է 2015 թվականի հունվարի 2-ից հետո ծագած հարաբերությունների վրա՝ օդանավակայանի մասով:

«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրենքի 13.7-րդ հոդվածում կատարված փոփոխության համաձայն.

*«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի հավելված 1-ով հաստատված ցանկի 13-րդ կետով նախատեսված գործունեության տեսակն (**<u>զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցում</u>**) իրականացնող անհատ ձեռնարկատերերը կարող են համարվել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտներ:*

Ընդ որում՝ նախատեսված գործունեության տեսակն իրականացնող անհատ ձեռնարկատերերը կարող են ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում՝ անկախ տվյալ տարվա որևէ ժամանակահատվածի համար արտոնագրային վճար վճարող համարվելու հանգամանքից: Նշված դեպքում հարկային հաշվառման և հարկային պարտավորությունների հաշվարկման հետ կապված հարցերը կարգավորվում են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի II.2-րդ գլխով սահմանված կարգով, և տվյալ տարվա որևէ ժամանակահատվածի համար վճարված արտոնագրային վճարի գումարը վերադարձման ենթակա չէ:

«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրենքի 26-րդ հոդվածում կատարված փոփոխության համաձայն.

«Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենքի ընդունման հետ կապված նշված հոդվածում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

Օրենքով սահմանված ծանուցման ենթակա գործունեությունն առանց ծանուցման իրականացնելու դեպքերում կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից գանձվում է տուգանք՝ ծանուցվող գործունեության համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի տասնապատիկի չափով, բայց ոչ պակաս հինգ հարյուր հազար դրամից: Նշված խախտումն արձանագրելուց հետո մեկ տարվա ընթացքում խախտումը (ծանուցման ենթակա գործունեության տեսակից) կրկնվելու դեպքում կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից գանձվում է տուգանք՝ ծանուցման ենթակա գործունեության իրականացման ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի քսանապատիկի չափով, բայց ոչ պակաս մեկ միլիոն դրամից:

Օրենքի 30.2-րդ հոդվածում կատարված փոփոխության համաձայն.

«Հարկային պարտավորություններ» բառերն փոխարինվել են «հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ»:

«ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է նոր՝ «զ» ենթակետով, որի համաձայն.

Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարումը օդանավակայանում գործող անմաքս առևտրի խանութի կազմակերպչին ակցիզային հարկով չի հարկվում:

Նշված փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից, իսկ գործողությունը տարածվում է 2015 թվականի հունվարի 2-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրենքի 2-րդ հոդվածում կատարված փոփոխության համաձայն.

Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողների կողմից սեղմված բնական գազի օտարման դեպքում՝ ակցիզային հարկը օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող անուղղակի հարկ է:

Օրենքի 3-րդ հոդվածում կատարված փոփոխությունների համաձայն.

Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներն են, մասնավորապես՝ սեղմված բնական գազը և գազանման այլ ածխաջրածինները (բացառությամբ սեղմված չհամարվող բնական գազի):

Օրենքի իմաստով սեղմված բնական գազ է համարվում ԱՏԳ ԱԱ 2711 21 ապրանքային դիրքին դասվող բնական գազը, որը ստացվում է ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնող անձանց կողմից մի քանի փուլով (խառնուրդի մաքրում, խոնավության և այլ աղտոտիչների հեռացում ու սեղմում) գազի մշակման արդյունքում՝ առանց բնական գազի բաղադրության փոփոխության:

«ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեղմված բնական գազի դեպքում ակցիզային հարկ վճարող են համարվում ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնող իրավաբանական (այդ թվում՝ ՀՀ-ում սահմանված կարգով գրանցված օտարերկրյա իրավաբանական անձանց ներկայացուցչությունները և մասնաճյուղերը) և ֆիզիկական անձինք:

Օրենքի 4-րդ հոդվածում կատարված փոփոխության համաձայն.
Ակցիզային հարկով հարկվող օբյեկտ է համարվում՝ ՀՀ տարածքում ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողների կողմից սեղմված բնական գազի օտարումը:

«ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օրենքի 5-րդ հոդվածում կատարված փոփոխության համաձայն.

Ակցիզային հարկը վճարվում է հետևյալ դրույքաչափերով՝

- *Սպիրտային խմիչքների համար՝ 55%, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 550 դրամ,*
- *Սիգարների համար՝ 605000 դրամ,*
- *Սիգարելաների համար՝ 16500 դրամ,*
- *Սիգարետներ ֆիլտրով՝ 5500 դրամ,*
- *Սիգարետներ առանց ֆիլտրի՝ 1540 դրամ,*
- *Դիզելային վառելիքի համար՝ 10%, բայց ոչ պակաս, քան 1 տոննայի համար 35000 դրամ,*
- *Սեղմված բնական գազի համար (1000 խոր/մ)՝ 8330 դրամ:*

«ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բենզինի 1 տոննայի համար սահմանված ակցիզային հարկի և օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի հանրագումարը 120000 ՀՀ դրամից պակաս լինելու դեպքում ակցիզային հարկն ավելացվում է այն չափով, որպեսզի բենզինի 1 տոննայի համար գանձվող ակցիզային հարկի և ԱԱՀ-ի հանրագումարը հավասարվի 120000 ՀՀ դրամի (112000 դրամի փոխարեն):

Օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է ***2016 թվականի մայիսի 1-ից ծագած հարաբերությունների վրա:***

ՀԱՐՑԵ±Ր

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ